ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 5, 1961 Общественные науки

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Ա. Ե. Տեր-Ղևոնդյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ ԸՍՏ ԱՐԱԲ ԱՇԽԱՐՀԱԳԻՐՆԵՐԻ

Աշխարհագրությունն արաբների մոտ սկսեց զարգանալ Թ դարից, երբ արաբական մատենագրությունը ընդհանրապես զարթոնքի մի շրջան էր ապրում։ Այս գիտությունն արաբների համար ուներ կրկնակի նշանակություն՝ տեսական և գործնական։ Գիտական տեսակետից աշխարհագրությունը մի կողմից հարում էր աստղաբաշխությանը, և միևնույն ժամանակ առատ նյութ էր տալիս պատմության ուսումնասիրման համար։ Իսկ գործնական տեսակետից աշխարհագրությունն ուներ նույնիսկ պետական նշանակություն, որպես փոստի վարչությանը առատ նյութ հայթայթող մի գիտություն։

Արաբական աշխարհագրության զարգացմանը նպաստեց հույն նշանավոր աշխարհագիր Պտղոմեոսի (Պտղոմեոս) աշխատությունների արաբերեն թարգմանությունը։ Նույնիսկ աշխարհագրություն բառը՝ «ջուղրաֆիա» արաբների մոտ հունական ծագում ունի։

Արաբ աշխարհագիրները թեպետ և փաստական տվյալներով հարուստ են, այնուամենայնիվ հունական աշխարհագրական ու աստղաբաշխական տեսությունների վրա նոր բան չավելացրին, չնայած այն բանին, որ նրանց հաղորդած հարուստ տվյալները կարող էին հիմք հանդիսանալ տեսական հարցերում ավելի առաջ գնալու համար[1]։

Իբն Խորդադբեհը արաբների առաջին մատենագիրն է[2], *որից մեզ հասել է նկարագրական տիպի աշխարհագրական մի երկ։ Նրա ամբողջական անունն է Աբու-լ-կասիմ Ուբայդ Ալլահ իբն Աբդ Ալլահ իբն Խորդադբեհ. ծնվել է Խորասանում մոտավորապես 820 թ. ծագումով պարսիկ էր և զրադաշտականի թոռ. հայրը եղել է թաբարիստանի կառավարիչ և իր որդուն տվել է փայլուն դաստիարակություն։*

Իբն Խորդադբեհի կենսագրությունից[3] *քիչ բան է հայտնի։ Գիտենք միայն, որ Թ դարի կեսերին նա արդեն Աբբասյան արքունիքին մոտիկ անձնավորություն էր, իսկ սրանից որոշ ժամանակ հետո Ջիբալ (Իրաքի և Իրանի միջև) նահանգի փոստային վարչության պետը։ Այս պաշտոնը պահանջում էր աշխարհագրական լայն գիտելիքներ, և միևնույն ժամանակ այսպիսի պաշտոն վարողը պետք է խալիֆային նվիրված անձնավորություն լիներ, որովհետև խալիֆայության մեջ փոստի վարչությունը արքունիքի համար լրտեսության դեր էր կատարում։*

Ալ-Մուտամիդ խալիֆայի (870—892) օրոք իբն Խորդադբեհն արդեն ար-

---

[1] Տե՛ս И. Ю. Крачковский, Избранные сочинения, М. Л., 1957, IV, 15—36.
[2] G. Brockelmann, Geschichte der Arabischen Litteratur, I, 1898, 225—226.
[3] Крачковский, Избранные, IV, 147—150.

քունիքում էր՝ որպես խալիֆային մոտիկ անձնավորություն, և այստեղ էլ ավարտում է իր աշխարհագրությունը։ Ըստ Ժ Է դարի մատենագիր Հաջի խալիֆայի տեղեկության, նա մահացել է 912-ին[4]։

Իբն Խորդադբեհը գրել է շատ աշխատություններ՝ դրական, պատմական և այլ նյութերի շուրջը, սակայն մեզ հասել է միայն նրա աշխարհագրությունը՝ երեք գրչագրերի մեջ։ Առաջին երկուսի (Կ. Պոլսի և Օքսֆորդի) հիման վրա կատարվեց առաջին հրատարակությունը[5]։ Հետագայում, Եգիպտոսում հայտնաբերված մի ձեռագրի հիման վրա, հոլանդացի հայտնի արաբագետ դե Գույեն այն լույս ընծայեց իր արաբ աշխարհագիրների հայտնի մատենաշարի մեջ, բնագրով և ֆրանսերեն թարգմանությամբ[6]։

Իբն Խորդադբեհի աշխարհագրությունը Մերձավոր Արևելքի, Հյուսիսային Աֆրիկայի, Միջին Ասիայի և Կովկասի պատմության ու աշխարհագրության համար մի կարևոր աղբյուր է։ Այս աշխատության արժեքը նրանումն է, որ հեղինակը ոչ միայն եղել է իրավնկ մատենագիր, այլև լինելով արքունիքին մոտիկ անձնավորություն, հնարավորություն է ունեցել օգտագործել արքունի դիվանի բազմաթիվ փաստաթղթեր։

Նրա «Քիտաբ ալ-մասալիք ու ալ-մամալիք» (գիրք ճանապարհների և թագավորությունների) աշխատությունը, ըստ սովորության սկսում է երկրի ձևի մասին ընդհանուր նկարագրությամբ։ Հետաքրքրական են նրա տեղեկությունները խալիֆայության վարչական բաժանումների և մանավանդ հարկերի մասին։ Նրա տվյալներով, հնարավոր է վերականգնել խալիֆայության հարկերի քանակը և ընդհանրապես ցույց տալ նրա տնտեսական վիճակը, մի բան, որն իրոք հաջողվել է արաբագետ Ա. Կրեմերին[7]։ Աշխատության այս մասը վերջանում է Պարսկաստանի հնագույն շրջանի թագավորների մասին տեղեկություններով, որոնք քաղված են պարսկական աղբյուրներից։ Հիշվում է նաև հին թագավորների կրած տիտղոսները և ի շարս այլոց, նաև Հայաստանի թագավորների տիտղոսը։

Նրա աշխատության մեջ կարևոր տեղ է գրավում ճանապարհների նկարագրությունը, որոնց կենտրոնում ընկած է Բաղդադը։ Գրքում նկարագրվում են ճանապարհները Բաղդադից դեպի Միջին Ասիա և կամ դեպի Հնդկաստան։ Միաժամանակ տեղեկություններ են տրվում վարչական բաժանումների և այլնի մասին։

Իբն Խորդադբեհի աշխարհագրության գիտական հրատարակության առթիվ դե Գույեն այն միտքն է հայտնել, թե այս գրվածքը ունեցել է երկու խմբագրություն՝ ընդարձակ և համառոտ։ Ըստ նրան, սրանցից առաջինը գրված է մոտավորապես 846—847 թթ., իսկ երկրորդն ավելի մանրամասն է և շարադրված է մոտավորապես 885—886 թթ.։ Նա կարծում է, որ այս երկու խմբագրություններն էլ կորած են և այն, ինչ ինքը հրատարակել է, ընդարձակ խմբ-

---

[4] Lexicon Bibliographicum... Haji Khalfa, ed. G. Flügel, II, էջ 101.

[5] Le livre des routes et des provinces par Ibn Khordadhbeh. Publie traduit et annoté par C. Barbier de Meynard. Journ. As., ser. VI t. V. № 17, Paris, 1865.

[6] Bibliotheca Geographorum Arabicorum. Edidit M. J. de Goeje. Pars sexta, Kitab al-masalik w al-mamalik auctore Abu'l-Kasim Obaidallah ibn Khordadhbeh, Lugduni Batavorum, 1889 (այսուհետև BGA).

[7] A. Kremer, Gulturgeschichte des Orients unter den Chalifen I, Wien, 1875, 268—269.

բագրության համառոտումն է[8]։ Այս կարծիքը արաբագիտության մեջ[9], երկար ժամանակ անվիճելի է համարվել, սակայն վերջերս արաբագետ Պ. Բուլգակովը այն միտքը հայտնեց, որ երկու խմբագրություններն էլ Թ դարի 80-ական թվականներից են, և որ դե Գոյեի հրատարակածը հենց ընդարձակ խմբագրությունն է[10]։

Արժեքավոր են Բրն Խորդադբեհի տեղեկությունները Հայաստանի մասին, մանավանդ որ դրանք արաբ աշխարհագրության հնագույն տեղեկություններն են Հայաստանի վերաբերյալ և ուսումնասիրողները հաճախ են օգտագործել նրա հաղորդած տեղեկությունները[11]։

Սասանյան Արտաշիր արքային ենթակա թագավորների ցանկում, որն անկասկած քաղել է պարսկական մի աղբյուրից, նա հիշում է նաև «թագավոր Մեծ Հայքի» (ملك ارمنين.)[12] տիտղոսը։ Սա լրիվ համապատասխանում է թե հայ, թե հույն աղբյուրներից մեզ հասած տեղեկություններին։ Ե դարի հայ պատմիչների երկերում և առաջին հերթին Ագաթանգեղոսի Պատմության մեջ այս տիտղոսը նույն ձևով հաղորդվում է «Արքայ Հայոց Մեծաց»[13]։ Արշակունի թագավորների այս պաշտոնական անունը նույն ձևով գտնում ենք նաև հունական պատմական աղբյուրների և արձանագրությունների մեջ՝ որպես βασιλεὺς τῆς μεγάλης Ἀρμενίας.

Այստեղ հետաքրքրական է նաև «Մեծ Հայք» տեղանվան հիշատակումը, որովհետև արաբ մատենագիրները այդ մասին բոլորովին տեղյակ չեն։ Եվ պատահական չէ, որ Բրն Խորդադբեհը հիշում է Մեծ Հայքի պարսկական (պահլավական) ձևը, որը մի անգամ ևս վկայում է այս տեղեկության պարսկական հին աղբյուրներից քաղված լինելու մասին։ Արաբական աղբյուրները Մեծ Հայքի փոխարեն օգտագործում էին պարզապես Արմինիա[15] անունը, իսկ բյուզանդական Հայաստանը, որն այլ նահանգների հետ ընդգրկում էր նաև Փոքր Հայքը, նրանք կոչում էին Հայոց երկիր (بلاد ارمن)։ Ճիշտ է ուշ շրջանում (Ժ դ.) Յակուտ աշխարհագրի բառարանում հանդիպում ենք Մեծ Հայաստան (ارمينية الكبرى) և Փոքր Հայաստան (ارمينية الصغرى) անուններին[16], սակայն այստեղ առաջինը նշանակում է Խլաթի թագավորությունը՝ Շահի արմենների իշխանությունը Հարավային Հայաստանում, իսկ երկրորդը՝ Հյուսիսային Հայաստանն է, որը Յակուտի մոտ հիշվում է որպես Թիֆլիսի երկիր։ Սա հիշեցնում է Ժ դարի աշխարհագիր Բրն Հաուկալի մոտ հիշատակված ներքին և

[8] BGA, VI, էջ XV—XX.

[9] Hudud al-Alam, the regions of the world, London, 1937, Barthold's preface, էջ 12—13.

Крачковский, Избранные, IV, 148.

[10] П. Г. Булгаков, „Книга путей и государств" Ибн Хордадбеха (к изучению и датировке редакций), Палест. Сб, 3 (66) 1958, էջ 127—136։

[11] Н. А. Караулов, Сведения арабских писателей о Кавказе, Армении и Азербайджане, СМОМПК, XXXII, էջ 1—21։

[12] BGA, IV, 17.

[13] Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, 1909, էջ 17, 47, 126 և այլն։

[14] М. Ростовцев, Апаранская надпись царя Тиридата, Анийская серия, 6, СПб, 1911, էջ 15—17։

К. В. Тревер, Очерки по истории культуры древней Армении, М. Л., 1953, էջ 237—238, 271—283։

[15] M. Ghazarian, Armenien unter der arabischen Herrschaft, Marburg, 1903, էջ 69—70։

[16] Jacut's Geographisches Wörterbuch, Leipzig, 1924, I, էջ 220։

արտաքին Հայաստանները (الداخلة و الخارجة)[1], որոնցից առաջինը Բագրատունյաց անմիջական իշխանության տակ գտնվող Հյուսիսային Հայաստանն էր, իսկ մյուսը՝ Բագրատունյաց թագավորության հետ թուլորեն կապված Հարավային նահանգներն էին (Վասպուրական, Տարոն, Մանազկերտի ամիրայություն և այլն)։

Բյուզանդական թեմերի շարքում Իբն Խորդադբեհը մեջ է բերում նաև Արմենիակոն թեմը։ Նա հիշում է «ալ-Արմանիակ թեմը (عمل الارمنياق), որի բերդերից են Կուլունիա և տասն և վեց բերդեր, Խալդիայի թեմը, որի սահմանն է Արմինիան։ Սրա մեջ կան վեց բերդեր»[18]։ Այստեղ Կողոնիան (Կուլունիա) հիշվում է որպես Արմենիակոնի մի մասը, իսկ Խաղտիքը իրոք որ Տայքի կողմից սահմանակից էր Հայաստանին։

Հետաքրքրական է «Ջարբիի» մասին նրա տեղեկությունը։ Խոսելով Պարսկաստանի մասին, նա գրում է. «իսկ ալ-Ջարբին Հյուսիսային երկիրը՝ պետության (իմա՝ Իրանի—Ա. Տ. Ղ.) քառորդն է և հյուսիսի Իսբահբադը պարսիկների [մոտ ընդունված] ձևով կոչվում էր Ադարբադգան Իսբահբադ։ Այս երկրամասում են Արմինիան Ազարբայջանը...»[19]։

Ակներև է, որ այս տեղեկությունը ևս քաղված է պարսկական աղբյուրից, որովհետև այդ մասին են վկայում անունների պարսկական ձևերը, ինչպես օրինակ՝ Ադարբադգան (اذربادكان) տեղանունը, փոխանակ արաբների մոտ ընդունված Ազարբայջանի։

Ի՞նչ է նշանակում Ջարբի։ Սա ասորերեն բառ է, որը նշանակում է հյուսիս[20]։ Խոսքը այստեղ վերաբերում է Սասանյան կայսրության հյուսիսային քուստակին։ Ջ դարում սասանյան Խոսրով Ա Անուշիրվանը (521—578) կայսրությունը ռազմավարչական բարեփոխությունների ենթարկեց[21], բաժանելով չորս մասի[22]։ Դրան համապատասխան ընդհանուր Երան սպահպետի (Իրանի սպարապետի) փոխարեն նշանակեց չորս սպահպետների։ Այս չորս մասերից հյուսիսայինի մեջ մտնում էին Ատրպատականը և Հայաստանը, որի հետ էին նաև Վիրքն ու Աղվանքը։ Է դարի հայկական Աշխարհացույցը այս չորս մասերից ամեն մեկը կոչում է քուստ (քուստի), ընդ որում հյուսիսայինը կոչվում է քուստի կապկոհ (Կովկասի երկիր)։ Աշխարհացույցի ընդարձակ խմբագրության մեջ այսպես է նկարագրված[23] «Քուստի Կապկոհ որ է կողմն կաւկասու լերանց յորում են աշխարհ երեքտասան. Ատրպատական, Արմն (որ է) Հայք, Վարչան՝ որ է վիրք, Ռան՝ որ է Աղուանք, Բալասական, Սիսական...»։

Արաբական խալիֆայության օրոք Ատրպատականը և Արմինիան իրար միացնելու այս սովորությունը շարունակվեց և հաճախ այս երկու երկրները միացվում էին մի ոստիկանի իշխանության տակ[24]։ Ժ դարի արաբ աշխարհա-

[17] Opus geographicum auctore Ibn Haukal, Lugduni Batavorum, 1938, էջ 343։

[18] BGA, VII, 108.

[19] Անդ, VI, 118.

[20] Lexicon Syriacum, Berlin, 1895, էջ 61։

[21] Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, СПб, 1908, էջ 214—21։

[22] Th. Nöldeke, Geschichte der Perser und Araber zur Zeit der Sassaniden, aus der arabischen Chronik des Tabari, Leiden, 1879, էջ 155։

[23] Աշխարհացոյց, Վենետիկ, 1881, էջ 40. J. Markwart, Eranšahr, Berlin, 1901, էջ 9—10։

[24] Ա. Տեր-Ղևոնդյան, Քուստ ի կապկոհ վարչական միավորի վերապրուկները խալիֆայության ժամանակ, Տեղեկագիր, 1956, № 9։

գիր ալ-Մուկադդասին հատուկ անվամբ տարբերում է այս երկրամասը՝ «ընդարձակ հովիտների երկիր» (اقاليم الرحاب)[25], իսկ ԺԳ դարի մատենագիր Յակուտ ալ-Համաուին իր Աշխարհագրական բառարանի մեջ հիշում է այս անվանումը (առ-Ռիհաբ)[26] արդեն որպես տեղանուն, որի տակ գրում է. «Դա մի երկիր է Ադարբայջանում ու Դարբանդում և Արմինիայի մեծամասնությունը մտնում է այս անվան տակ»։

Ըստ արաբ աշխարհագիրների, այդ թվում և Իբն Խորդադբեհի, աշխարհը բաժանվում է չորս մասերի՝ Եվրոպա (Ուրուֆա), Աֆրիկա (Լուբիա), Հարավային և Արևելյան Ասիա (Ատիուֆիա) և Սկյութիա (Ասկուտիա՝ միջին և հյուսիսային Ասիա)։ Ահա այս վերջինիս մեջ են Արմինիան[27], Խորասանը, Խազարները և այլն։ Մեծ Հայքի գետերից հիշվում են Եփրատը (ալ-Ֆուրատ) իր Արածանի (Արսանաս) վտակով, Տիգրիսը (Դիջլա) և Արաքսը (առ-Ռաս), որի մասին ասում է. «Առ-Ռասի՝ Արմինիայի գետի սկիզբը Կալիկալայից է, անցնում է Առանով, նրա մեջ է թափվում Առանի գետը, ապա անցնում է Ուարսանով (Վարդանակերտ)...»[28]։

Որպես փոստի վարչության պաշտոնյա, իբն Խորդադբեհը տալիս է առևտրական բազմաթիվ ճանապարհների նկարագրությունը։ Անդրկովկասում որպես երկու խոշոր կենտրոններ, նա հիշատակում է Պարտավն ու Դվինը։ Այսպես, նա հիշում է ճանապարհը Պարտավից (Բարդաա) Թբիլիսի (Թիֆլիս), Պարտավից Դերբենտ (ալ-Բաբ ու ալ-Աբուաբ), Պարտավից Դվին (Դաբիլ), ինչպես նաև Մարանդից Նախճավան (Նաշաուա) և ապա Դվին[29]։ Հայաստանի ճանապարհների մասին ավելի մանրամասն խոսում են Ժ դարի արաբ աշխարհագիրներ ալ-Իսթախրին, իբն Հաուկալը և ալ-Մուկադդասին, որոնք թվում են Բագրատունյաց թագավորության օրոք Հայաստանում գոյություն ունեցող բոլոր կարևոր ճանապարհները։ Սակայն իբն Խորդադբեհի հաղորդած տվյալների նշանակությունը նրանումն է, որ դրանք վերաբերում են հենց արաբական տիրապետության շրջանի Հայաստանին։ Այստեղ նա հիշում է նաև Աղվանքից ու Ատրպատականից եկող և Արտրսի հովտով ու Կարնո քաղաքի (Կալի կալա) վրայով Տրապիզոն գնացող ճանապարհը։ Հետագայում, Բագրատունյաց թագավորության ժամանակ, այս մայրուղին մի քիչ թեքվեց դեպի հյուսիս, անցնելով Անիի վրայով, որն իրեն էր ձգում առևտրական քարավանները[30]։

Ճանապարհների երկարությունը չափելու համար Իբն Խորդադբեհի միավորները օրվա ճանապարհն է (يوم) և փարսախը։ Առաջինը կարծվում է, որ հավասար է 5—7 փարսախի, այսինքն 30—40 կիլոմետրի[31]։

Արաբական տիրապետության տակ Հայաստանը Վիրքի և Աղվանքի հետ միասին մտնում էր մի վարչական միավորի մեջ, որը Հայաստանի անվամբ կոչվում էր «Արմինիա»։ Արմինիայի մայրաքաղաքն էր նախ միայն Դվինը և ապա Է դարի վերջից՝ Պարտավն ու Դվինը միասին։ Պարտավի կողքին Դվինը

[25] BGA, III, 373.
[26] Jacut, II, 758.
[27] BGA, VI, 155.
[28] Անդ, 174.
[29] Անդ, 122.
[30] Я. Манандян, О торговле и городах Армении, Ереван, 1954, էջ 233։
[31] СМОМПК, XIX, стр. 59, прим. 21.

երբեք չվերածվեց Արմինիայի ոստիկանի որևէ տեղական ներկայացուցչի նստավայրի, ինչպիսին էր Թբիլիսին։ Ճիշտ է, Արմինիայի ոստիկանները Թ դարում նստում էին գլխավորապես Պարտավում, բայց նրա հետ մեկտեղ Դվինը նույնպես ոստիկանի նստավայր լինելուց չէր դադարել[32]։

Արմինիան, ըստ արաբների, չորս մասի էր բաժանվում, որոնք սոսկ հաջորդականությամբ կոչվում էին՝ առաջին, երկրորդ, երրորդ և չորրորդ[33]։ Իբն Խորդադբեհը հետևյալ կերպ է նկարագրում. «Առաջին Արմինիան է աս-Սիսաջանը, Առանը, Թիֆլիսը, Բարդաան, ալ-Բայլականը, Կարալան և Շիրուանը։

Երկրորդ Արմինիան է Ջուրզանը, Սուղդարիլը, Բար ֆիրուզ Կուրադը և ալ-Լարզը։

Երրորդ Արմինիան է ալ-Բուսֆուրրաջանը, Դարիլը, Սիրաջթայրը, Բաղրաուանդը և Նաշաուան։

Չորրորդ Արմինիան է Շիմշաթը, Խիլաթը, Կալիկալան, Արջիշը և Բաջունայսը»[34]։

Առաջին Արմինիան արաբ աշխարհագիրների մոտ իր մեջ ընդգրկում է ամբողջ Աղվանքը կամ Առանը, որի կարևորագույն քաղաքը Պարտավն էր։ Բացի սրանից, այստեղ հիշվում է նաև նրա հնագույն մայրաքաղաքը Կապաղակը (Կարալա), Փայտակարանը (ալ-Բայլական) և Շիրվանի նահանգը։ Թբիլիսիի (Թիֆլիս) հիշատակումն այս մասում լոկ թյուրիմացություն է, որովհետև այն արաբ մատենագիրների մոտ սովորաբար նշվում է որպես երկրորդ Արմինիայի, այսինքն՝ Քարթլիի մայրաքաղաքը։

Աղվանքի մասին արաբ մատենագիրները հաճախ են խոսում, տալով հետաքրքրական տեղեկություններ։ Ըստ նրանց, ոչ միայն Ը, այլև Ժ դարերում աղվաններենը դեռ կենդանի լեզու էր[35], որովհետև ժողովրդի հիմնական զանգվածը հավանաբար դեռ քրիստոնյա էր։ Սյունիքը (աս-Սիսաջան) առաջին Արմինիայի մեջ էր մտնում այն պատճառով, որ, ինչպես հայտնի է, Զ դարի վերջում նրա իշխանները բաժանվել էին Հայաստան մարզպանությունից[36], իսկ արաբները Արմինիայի այս չորս մասերի բաժանումը կատարել էին, մեծ մասամբ, ըստ նախկինում գոյություն ունեցող դրության։

Արևելյան Վրաստանը կամ Քարթլին կազմում էր երկրորդ Արմինիան, որն արաբների մոտ կոչվում էր Ջուրզան։ Արաբական տիրապետության ընթացքում Արմինիա ոստիկանության մեջ միայն արևելյան Վրաստանն էր մտնում, իսկ Արևմտյանը գտնվում էր բյուզանդական տիրապետության տակ։ Հիշտ է, այս մասը ենթարկվում էր արաբական արշավանքներին, բայց նա երբեք չմտավ Արմինիայի կազմի մեջ։

Ահա հենց երկրորդ Արմինիայումն է, որ Իբն Խորդադբեհը պետք է հիշեր Թբիլիսին։ Հետաքրքրական է, որ Քարթլիի հետ միասին երկրորդ Արմինիա-

---

[32] J. Laurent, L'Arménie entre Byzance et l'Islam, Paris 1919, էջ 178։ А. Тер-Гевондян, К вопросу о возникновении двинского эмирата в Армении, Иссл. по ист. культ. нар. вост., Сборник в честь Н. А. Орбели, М. Л., 1960, էջ 134։

[33] M. Ghazarian, Armenien... 69—70.

[34] BGA, VI, 122.

[35] Opus Geographicum... 349.

[36] Адонц, Армения, 218—220.

յում հիշվում են նաև Կովկասյան լեռնային շրջանները, ինչպես, օրինակ՝ լեզգիների երկիրը (ալ-լաքզ) Դաղստանի հարավում։

Մեծ Հայքը ընդգրկված էր հիմնականում երրորդ և չորրորդ Արմինիաների մեջ, երրորդում արևելյան և հյուսիսային նահանգներն էին, իսկ չորրորդում՝ արևմտյան և հարավ-արևմտյան նահանգները։ Արաբների ժամանակ անմիջական պահանջ չկար Մեծ Հայքը նման մասերի բաժանելու։ Ճիշտ է Ե—Է դարերում գոյություն ունեցող երկու բաժանումները՝ Պարսկահայաստան և Բյուզանդական Հայաստան, կարող էին արաբներին անցնել որպես վարչական բաժանման վերապրուկ՝ երրորդ Արմինիա և չորրորդ Արմինիա անունների տակ, սակայն վերջիններս վարչական խիստ բաժանումներ չէին։ Օրինակ, չորրորդ Արմինիան կարող էր արաբների համար միայն ռազմական նշանակություն ունենալ այն տեսակետից, որ նա ընդգրկում էր գլխավորապես այն քաղաքներն ու գավառները, որոնք Բյուզանդիայի հետ մղվող պայքարում[37] ռազմական նշանակություն ունեին և որոնց տարբեր մասերում տեղավորված էր արաբ տարրը։ Դրանք էին Աղմուշատը (Շիմշաթ), Խլաթը (Խիլաթ), Կարնո քաղաքը (Կալի կալա), Արճեշը (Արջիշ) և Ապահունիսը (Բաջունայս)։ Սրանք Հայաստանի այն մասերն են, որտեղ հետագայում Բագրատունյաց թագավորության ժամանակ գոյացան արաբական մանր ամիրայություններ[38]։ Պետք է նշել, որ Բաջունայս տեղանունը բանասիրության մեջ որոշ թյուրիմացության տեղիք է տվել, օրինակ, Մ. Ղազարյանը այն նույնացնում էր այլևայլ տեղանունների հետ[39], բայց ավելի հավանական է այն կարծիքը[40], որ դա պարզապես Ապահունիքն է։ Բաջունայսը պետք է կարդալ առանց արաբական ջ-ի կետի, այսինքն Բահունայս (بحونس) կամ Բահունիս (/Ապահունիս), որտեղ սկզբի ա-ն ընկել է և այսպես էլ տարածվել է ամբողջ արաբական մատենագրության մեջ։ Պետք չէ մոռանալ, որ հենց Ապահունիքումն էր տեղավորված Մանազկերտը՝ կայսրների քաղաքը և պարզ է, որ Թ դարի արաբ մատենագիրները պետք է հաճախ խոսեին նրա մասին։

Մեծ հայքի մնացած մասերը գտնվում էին երրորդ Արմինիայում։ Դրանք էին Վասպուրականը (ալ-Բուսֆուրրաջան), Բագրևանդը (Բաղրաուանդ) Շիրակը (Սիրաջ), Տայքը (Թայը) և Նախճավանը (ան-Նաշաուա)։ Վասպուրականի գավառներից առանձին հիշվում է Աղբակը (ալ-Բակ)[41]։ Այստեղ որոշ չափով առեղծվածային են Շիրակի և Տայքի անունները, որոնք ենթադրաբար են վերծանվում։ Արաբ մատենագիրներն ընդհանրապես դրանք միասին են գրում (Սիրաջթայը), որը երկու մասի բաժանելով է, որ հնարավոր է լինում տարբերել Շիրակն ու Տայքը։ Այս երկուսի միասին հիշատակելը հավանաբար հետևանք էր այն բանին, որ դրանք Բագրատունիների կալվածներն էին և երկուսն էլ գտնվում էին հյուսիսում։ Սակայն պետք է նշել, որ կան եղակի դեպքեր, երբ Շիրակն առանձին է հիշվում, ինչպես, օրինակ, Թ դարի վերջին և Ժ

[37] A. Vasiliev, Byzance et les Arabes, I, La dynastie d'Amorium, Bruxelles, 1935 (reimprimé en 1959), էջ 89—121։

[38] M. Canard, Histoire de la dynastie des Hamdanides, Alger, 1955, էջ 477, J. Marquart, Südarmenien und die Tigrissquellen, Wien, 1930, էջ 501—508։

[39] M. Ghazarian, Armenien.. 74—75.

[40] V. Minorsky, Abu Dulaf, Cairo, 1955, էջ 77։

[41] BGA, VI, 122.

դարի սկզբի աշխարհագիր Իբն Ռուստեի մոտ, երբ Հայաստանի գավառների մեջ հիշվում է միայն վերջինս Սիրաջ ձևով[42]։ Ակներև է, որ այստեղ արաբական շ/ն (ـش) տառի երեք կետերը մոռացվել են, իսկ տառավերջի կ-ի փոխարեն արաբական ջ-ի առկայությունը արդյունք է այն բանի, որ արաբերենը գ կամ կ չունի, իսկ բացի սրանից ج տառը արաբերենում ճիշտ որ ներկայացնում է ջ հնչյունը, բայց նա հաճախ է փոխարինում նաև գ հնչյունին (օր. Գագիկ> جاجك > ջաջիկ)[43]։

Հետաքրքրական է ընդգծել, որ Արմինիայի չորս բաժանումների մասին խոսում են հիմնականում Թ դարի (Բալաղուրի)[44] կամ Ժ դարի հենց սկզբի (Իբն ալ-ֆակիհ)[45] արաբ մատենագիրները, իսկ բուն Ժ դարի մատենագիրները (Իսթախրի, Իբն Հաուկալ, Մուկադդասի), որոնք ժամանակակից են Բագրատունիներին, արդեն այդ մասին չեն խոսում, որովհետև այդպիսի բաժանում, թեկուզ և ձևականորեն, այլևս չէր կարող գոյություն ունենալ։

Արաբ մատենագիրների մոտ հատուկ ուշադրության էր արժանացել սասանյան Կավատ Ա-ի և Խոսրով Ա Անուշիրվանի Աղվանքում ու Կովկասում ռազմա-շինարարական գործունեությունը, որպես խազարների դեմ պայքարի միջոցառում։ «Կուրաղը,—ասում է Իբն Խորդադբեհը,— կառուցեց ալ-Բայլական, Բարդաա և Կարալա քաղաքները և շինեց աղյուսե պարիսպը, իսկ Անուշիրվանը կառուցեց ալ-Շարուրան, Քարբարա և ալ-Բար ու ալ-Արուար քաղաքները. [վերջինս բաղկացած] է սարի լանջի վրա ամրոցներից. դրանք երեք հարյուր վաթսուն ամրոցներ են»[46]։

Դերբենտի, այսինքն Ճուրա Պահակի (ալ-Բար ու ալ-Արուար՝ դռներ կամ դարպասներ) ամրացումը Անուշիրվանի կողմից մանրամասնորեն հիշատակվում է բազմաթիվ արաբ մատենագիրների կողմից, որովհետև խազարների դեմ պայքարի նյութը արաբների ժամանակ էլ իր այժմեությունը չէր կորցրել[47]։

Զ—Է դարերում խազարները[48] ոչ միայն արշավում էին Աղվանք, ինչպես նաև Վրաստան ու Հայաստան, այլև որոշ մասեր (մանավանդ Աղվանքը) ժամանակավորապես ենթարկել էին իրենց իշխանությանը։ Իբն Խորդադբեհը հետևյալ կերպ է նկարագրում այս վիճակը. «Եվ Առան, Ջուրզան ու աս-Սիսաղյան նահանգները խազարների թագավորության մեջ էին, իսկ Դարիլ, Նաշաուա, Սիրաջ, Բաղրաուանդ, Խիլաթ, Բաջունայս նահանգները առ-Ռումի թագավորության մեջ էին և այն նվաճեցին պարսիկները մինչև Շիրվանի հողը»[49]։

Արաբ աշխարհագիրների մոտ շատ արժեքավոր է այն, որ նրանք հաճախ տալիս են խալիֆայության այլևայլ նահանգների հարկերի քանակը։ Ըստ Իբն Խորդադբեհի Արմինիայի հարկերի քանակը 4 միլիոն դիրհեմ (արծաթ դրամ) էր[50]։ Եթե վերցնենք ըստ Արմինիայի երեք բաղկացուցիչ մասերի տարածու-

---

[42] BGA, VII, 106.

[43] Ibn Miskawavhi (The Eclipse of the Abbasside Caliphate, 1920) II, 150.

[44] Liber expugnationis regionum, auctore al Beladsori, Lugd. Bat. 1866. էջ 19 — 94։

[45] BGA. V. 287

[46] BGA, VI. 122.

[47] Jacut, I, 437—442.

[48] Տե՛ս J. H. Kramers, Les Khazars, Analecta Orientalia, I, Leiden, 1954.

[49] BGA, VI. 122.

[50] Անդ, 124։

թյան, ապա պետք է ասել, որ այս գումարի մեծամասնությունը պետք էր լիներ Հայաստանի հարկը, որովհետև Աղվանքն իր տարածությամբ Մեծ Հայքից շատ ավելի փոքր էր, իսկ Վրաստանի միայն արևելյան մասն էր Արմինիայի կազմում։

Այս գումարը Արմինիայի սովորական ժամանակներում վճարած հարկն էր և պետք է նշել, որ որոշ խալիֆաների օրոք հարկերի քանակը կրկնապատկվում և եռապատկվում էր։ Օրինակ, ըստ Իբն Խալդունի[51], Արմինիայի հարկերի գումարը (հավանաբար Ը դարի երկրորդ կեսում) 13 միլիոն դիրհեմ էր։ Սա իհարկե բացառիկ դեպք է և պետք է նշել, որ ընդհանրապես արաբական տիրապետության ժամանակ հարկերի քանակը 4 միլիոնի սահմաններում է եղել[52]։

Իբն Խորդադբեհի տեղեկությունները Հայաստանի մասին թեպետ և հակիրճ են, այսուամենայնիվ արտացոլում են Հայաստանում արաբական տիրապետության ժամանակաշրջանը։ Այս տեսակետից մեզ հասած արաբ աշխարհագիրների աշխատությունների մեջ, որոնք խոսում են Հայաստանի մասին, նրա աշխարհագրական երկը ամենահինն է։ Նրանից օգտվել են շատ աշխարհագիրներ, ինչպես, օրինակ, Իբն ալ-Ֆակիհը (Թ—Ժ դդ.), Մուկադդասին (Ժ դ.) Իդրիսին (ԺԲ դ.) և Յակուտը (ԺԴ դ.)։

Իբն Խորդադբեհի անվան հետ կապված են Թ դարի երկրորդ կեսի (և Ժ դարի հենց սկզբի) արաբ մի շարք մատենագիրների երկերը, որոնք նկարագրում են գլխավորապես արաբական տիրապետության շրջանի Հայաստանը։ Դրանք են աշխարհագիրներ՝ Իբն ալ-Ֆակիհը, Իբն Ռուստեն և Կուդամա իբն-Ջաֆարը և պատմիչներ՝ Բալազուրին ու Յակուբին։ Վերջիններս մեծ չափով կապված են աշխարհագրության հետ այն տեսակետից, որ նրանցից առաջինը իր «Գիրք երկրների նվաճման» պատմական երկի մեջ տալիս է հետաքրքրական աշխարհագրական տեղեկություններ, իսկ Յակուբին բացի իր պատմությունից, ունի նաև աշխարհագրական մի երկ «Երկրների գիրք» (Քիթաբ ալ-Բուլդան) կոչված։

Սրանք բոլորն այս կամ այն չափով ժամանակակից են եղել Հայաստանում արաբական տիրապետության շրջանին և ոմանք (ինչպես Յակուբին) նույնիսկ անձամբ եղել են Հայաստանում[53] և մոտիկից հետաքրքրվել նրա վիճակով։ Առանձնապես հիշատակության արժանի է Իբն-ալ-Ֆակիհը, որն օգտագործել է Բալազուրիի պատմական տվյալները, ինչպես նաև Իբն Խորդադբեհի տեղեկությունները իր աշխարհագրական երկի մեջ, որը գրել է մոտավորապես 903 թ.։ Իբն ալ-Ֆակիհը նույնպես նկարագրում է Հայաստանը որպես Արմինիա ոստիկանության մի մասը՝ տալով վերջինիս չորս բաժանումները[54], որոնք համընկնում են թե Բալազուրիի և թե Իբն Խորդադբեհի բաժանումներին։ Բալազուրիի նման սա էլ հիշում է Կարնո քաղաքի հիմնադրման մասին այն առասպելը, թե այն կառուցել է բյուզանդական Հայաստանի կառավարչի դուստրը Կալին։ Առասպելներն ու զրույցները նրա մոտ որոշ տեղ են գրավում,

---

[51] A. Kremer, Cult.-- gesch., I. 343.

[52] M. Ghazarian, Armenien... 65 68. Հ. Նալբանդյան։ Արաբների հարկային քաղաքականությունը Հայաստանում, ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր (Հասար. գիտ.), 1954, № 12, էջ 79—84։

[53] BGA, V, 290.

[54] Անդ, 287.

օրինակ, հիշում է նույն քաղաքում գտնվող մի հրաշագործ եկեղեցու մասին և այլն[55]։ Սակայն ամենահատկանշականը նրա մոտ այն է, որ աշխարհագրական տեղեկությունները Հայաստանի մասին, միահյուսվում են պատմական տվյալների հետ։ Այսպես, նա տալիս է արաբական շրջանի Հայաստանի ոստիկանների ամփոփ ցուցակը[56]։

Յակուբիի մոտ ուշագրավ է Արմինիա ոստիկանության եոյակ բաժանումը, փոխանակ ուրիշների մոտ ընդունված քառյակ բաժանման։ Ըստ նրան Արմինիան բաղկացած է հետևյալ մասերից.

«Առաջին մասը (ունի) Դարիլ, Կալի կալա, Խիլաթ, Շիմշաթ և աս-Սառուադ քաղաքները։

Երկրորդ մասը (ունի) Բարդաա, ալ-Բայլական, Կաբալա և ալ-Բաբ ու ալ-Աբուաբ քաղաքները։

Երրորդ մասը (ունի) Ջուրվան, Թիֆլիս...»[57]։

Այստեղ բաժանումը հստակ կերպով կատարված է ըստ այդ երկրներում ապրող ժողովուրդների, այնպես որ Առաջին մասը հենց Հայաստանն է, Երկրորդը՝ Աղվանքը, իսկ Երրորդը՝ Վիրքը։ Սա իհարկե շատ բնական էր սպասել մի մատենագրից, որն անձամբ եղել էր Հայաստանում և մոտիկից ճանաչել երկիրը։

Արաբական շրջանի Հայաստանի վիճակը նկարագրող արաբ աշխարհագիրների այս աշխատությունները կարևոր նշանակություն ունեն Ը—Թ դարերի Հայաստանի քաղաքական ու տնտեսական կյանքի ուսումնասիրման համար, որովհետև նրանք շատ բաներում լրացնում են հայ մատենագիրների հաղորդած տեղեկությունները այդ նույն ժամանակաշրջանի մասին։

---

[55] Անդ, 292։
[56] Անդ, 292—294։
[57] СМОМПК, XXXII, 60.